ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N01

ՀՀ Վայոց Ձոր մարզի Ագարակաձոր համայնքի 2015թ. մարտի 24-ի ընդհանուր ժողովի

2015թ մարտի 24- ին տեղի ունեցավ Ագարակաձոր համայնքի ընդհանուր ժողով, մասնակցությամբ համայնքի 132 անդամների: Ժողովին մասնակցում էին համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցներ, Վայոց ձոր մարզի մարզպետ՝ Հ. Սարգսյանը, փոխմարզպետ՝ Ս. Թարիվերդյանը, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերի վարչության պետ՝ Ն.Սիմոնյանը:

Ժողովի նախագահող՝

համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ս. Մարգարյան

քարտուղար՝ Գ. Սաֆարյան

Օրակարգում՝

1. Համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2014թ. կատարած աշխատանքների մասին

Պարոն՝ Պ. Միրզոյանը ժողովականներին ներկայացրեց 2014թ. համայնքապետարանի կողմից կատարված աշխատանքները ըստ բնագավառների.

Հրավիրվել է ավագանու 6 նիստ . կայացվել է համայնքի խնդիրների վերաբերյալ 24 որոշում, համայնքի ղեկավարի կողմից հայցվել է 25 կարգադրություն, 71 որոշում:

Քաղաքացիներից ստացվել է 50 դիմում, 48-ին տրվել է դրական պատասխան:

2014թ. բավականին շատ աշխատանքներ է արվել «Մալբրի» համակարգում. ամբողջովին կարգավորված է բնակչության բազզան, համակարգում գրվում է համայնքի ղեկավարի որոշումները, կարգադրությունները, ավագանու նիստերի ընթաքի մասին տեղեկատվություն և նիստերի որոշումները:

Կայքի առաջին էջում տեղադրված է տեղեկատվություն համայնքին վերաբերվող իրադարձությունների և նորությունների վերաբերյալ:

2014թ.-ին

Համայնքում հաշվառված են 1403 հոգի

առկա 1328 հոգի

Ծնվել են 28 երեխա

Մահացել են 8 հոգի

Մշակույթ և կրթություն

Մշակույթի տանը այժմ գործում է երկու պարային խումբ. թվով՝ 37 երեխա հաճախում են պարի դասերի: 2014թ. փետրվարի տասներեքին <<ՄԻՆՈՐԱ>> մրցանակաբաշխության ժամանակ 55 խմբերից 25-ը արժանացան գավաթի այդ թվում նաև Ագարակաձորի պարային համույթը: Սույն թվականի ապրիլի ութին « ՄԻՆՈՐԱ» հանրապետական մրցույթ – փառատոնին արժանացել են «ԳՐԱՆ ՊՐԻ» մրցանակին: Օգոստոսի 16-ին «Ազգագրական պարերի » մարզային մրցույթ-փառատոնում արժանացան 2-րդ մրցանակային կարգին: Պարի խումբը ելույթով

հանդես եկավ նաև տարեվերջին կազմակերպած ամանորյա միջոցառմանը, Միջոցառման ընթացքում 160 երեխա համայնքապետարանի կողմից ստացան նվերներ:

Ագարակաձորի ՀՈԱԿ Մանկպարտեզ են հաճախում 42 երեխա 3-6 տարեկան: Մանկապարտեզը առաջնորդվում է կրթության նախարարության կողմից հաստատված կրթական ծրագրերով, կազմակերպվել է 6 միջոցառում, դիտվել՝ 2 ներկայացում:

Բարեկարգվել է մանկապարտեզի շրջակա տարածքը, տնկվել են պտղատու և դեկորատիվ ծառեր: Վերանորոգվել և ներկվել են մանկապարտեզի խաղահրապարակի տաղավարները: Տեղական միջոցների հաշվին մանկապարտեզի համար ձեռք է բերվել գույք՝ գորգ, ննջասենյակի պարագաներ:

Գյուղատնտեսության բնագավառում

Համայնքի հողօգտագործողներին մատչելի գներով պետական աջակցության ծրագրերի շրջանակներում բերվել և բնակչությանն է բաժանվել 20տ ազոտական պարարտանյութ:

46 գյուղացիական տնտեսության 14.48 հա ցրտահարված ծիրանենու այգու տերերին տրամադրվել է օգնություն՝ հողի հարկի 100% և ջրի վարձի 50% զեղչ ,որը կազմումէ 118.896 ՀՀ դրամ : Տրվել են անվճար սերմեր /վարունգ, լոլիկ, սեխ, ձմերուկ/:

Պայմանագրով 14 գյուղացիական տնտեսություններին տրվել է 2000կգ ցորենի սերմացու:

Աճուրդ-վաճառքով օտարվել է է 7.1 հա գ/նշ և գ/նշ այլ հողեր. հողերի իրացումից համայնքի բյուջե մուտքագրվել է 3 634,հազ. դրամ/ֆոնդային բյուջե/ :

Անասնապահություն.

Համայնքն ունի անասնապահության զարգացման համար լայն հնարավորություններ՝ վարելահողեր, խոտհարքներ, արոտներ: Այսօր քաղաքաբնակներն ավելի շատ կենդանիներ են խնամում, քան՝ մենք:

Համայնքում առկա է առ 01-ը հունվարի 2015թ-ի խոշոր եղջերավոր կենդանիներ՝

2014թ.	2013թ.
417,որից	406
կով-175	161
ոչխար-54	46
մայրեր-24	-
մեղվաընտանիք-487	556
թռչուններ- 1554	1625
խոզ-12	31

Համայնքի 288 առկա տնտեսություններից

2014թ.			2013թ.
40%	114-	ոչ մի տեսակի կենդանիներ չեն պահում-	141-49%
62%	179-	եղջերավոր կենդանիներ-	182-63%
68%	195-	կով	- 206-72%
97%	280-	խոզ	- 275
99%	284-	ոչխար	- 256

Այս տարի պետության աջակցության պայմաններում ավելացել է աշնանացան ցորենի և գարնանացան գարու ցանքատարածությունները՝18 հա-ով:

Մի շարք գյուղացիական տնտեսություններ դիմել են գյուղ.նախարարություն՝ տավարաբուծության զարգացման 2007-2015թթ. ծրագրի շրջանակներում ձեռք բերելու տոհմային երինջներ:

Շինարարություն- ջրամատակարարում

Համայնքի ղեկավարի որոշմամբ և ավագանու հաստատմամբ, գործում է «Ազարակաձոր» ՀՈԱԿ-ը, որին տրամադրվել է 5.975,3 հազար դրամ՝ շինարարական, ջրամատակարարման սպասարկման և աղբահանության աշխատանքները կատարելու համար:

Համայնքի բնակիչների հետ կնքվել է խմելու ջրի ջրամատակարարման – ջրահեռացման սպասարկման 273 պայմանագիր, աղբահեռացման՝ 113 պայմանագիր:

Կատարել է բազմապիսի և բազմաբնույթ աշխատանքներ:

*2014թ.մայիսից ՀՈԱԿ-ն իրականացնում է աղբահանություն՝ շաբաթական 1 անգամ պարբերականությամբ

*խմելու ջրի գլխամասում տեղադրվել է 1000 մմ խողովակից ջրընդունող հոր՝լրացուցիչ ջուր ստանալու համար

*4-րդ փողոցի սանիտարահիգիենիկ վիճակը կարգավորելու և հետագա անհարմարություններից խուսափելու համար անցկացվել է 60 մետր նոր ջրագիծ

*կատարվել է ջրընդունիչ հորերի ծածկերի հատակների բետոնապատման աշխատանքներ՝ընդհանուրը 40 քմ մակերեսով:

*վերանորոգվել է համայնքապետարանի սանհանգույցը

*կատարվել է Բոլորոբերդ բարձրացող ճանապաճհի՝20 կմ, փոսալցում և հարթեցում

*տեղադրվել է 10-ից ավելի նոր ջրափականներ

*վերացվել են բազմաթիվ խողովակաշարերի վթարներ

*մանկապարտեզի համար տեղադրվել է երկաթյա դարպաս

*գետառի երկայնքով տեղադրվել են ցուցանակներ՝աղբ թափելու վերաբերյալ՝10 հատ:

*Վերանորոգվել և տեսքի են բերվել մանկապարտեզի 4 տաղավարները և խաղահրապարակի կարուսելները:

2014թ.ի բյուջեի փաստացի եկամուտները՝30.932,3 հազ. դրամ

Գույքահարկ՝2.572,4 հազ.դրամ /102%/
Հողի հարկ՝ 2. 102,0 հազ. դրամ /100%/
Տեղական տուրքեր՝ 62հազ.դրամ /124%/
Հողի վարձավճար՝ 253.0հազ.դրամ /63%/
Այլ ոչ հարկային եկամուտներ՝ 2.138,0 հազ. դրամ /51%/
Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ՝ 20.170,9հազ.դրամ /100%/
Հողի իրացումից մուտքեր՝3.634 հազ.դրամ

Ծախսային մասով՝ 28.677,7 հազ.դրամ որից
Աշխատողների աշխատավարձ՝ 11.714,9 հազ.դրամ
Էներգետիկ ծառայություններ՝ 350 հազ.դրամ
Կապի ծառայություններ՝ 346 դրամ
Գործուղումներ՝ 178,8հազ. դրամ
Համակարգչային ծառայութ. 45 հազ. դրամ
Տեղեկատվական ծառ. 60 հազ. դրամ
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում՝ 90հազ.դրամ
Գրասենյակային նյութեր և հագուստ՝ 200 հազ.դրամ
Տրանսպորտային նյութեր՝ 898 հազ.դրամ
Վարչական սարքավորումներ՝ 100 հազ.դրամ
Կենցաղային և հանրային սննդի նյութեր՝ 50 հազ. դրամ
Հատուկ նպատակային նյութեր՝ 275 հազ. դրամ
Մասնագիտական ծառայություններ 185հազ. դրամ
Ապահովագրություն 25 հազ. դրամ

Ընթացիկ դրամաշնորհ մանկապարտեզ ՀՈԱԿ-ին և «Ագարակաձոր» ՀՈԱԿ - ին 13.455 հազ.դրամ
Այլ նպաստներ բյուջեից՝
Նորածին երեխաներին տրվող նպաստ՝380 հազ.դրամ
Անապահով ընտանիքներին հատկացվող օգ.325 հազ.դրամ

Համայնքի ղեկավարը ժողովին ներկայացրեց Ագարակաձորի զարգացման հ զարգացման 2013-2016թթ քառամյա ծրագիրը:
13 կետից բաղկացած ծրագրի որոշ մասը կատարվել է, իսկ մնացած կետերը կամ կատարվել են մասնակիորեն, կամ ընթացքի մեջ են:

Համայնքի անդամները իրենց ելույթում դրական գնահատեցին համայնքի ղեկավարի 2014թ.-ի առաջին կիսամյակի կատարած աշխատանքները նաև իրենց կողմից առաջ քաշեցին համայնքային խնդիրներին վերաբերվող մի շարք առաջնային, կենսական հարցեր. գյուղացին ունի բերքի, արտադրած մսի իրացման խնդիր : Մարզպետ Հ. Սարգսյանը տեղեկացրեց, որ այդ հարցը մտահոգում է նաև մարզի ղեկավարությանը և առաջիկա տարիներին լուծում կստանա:

Ժողովի մասնակիցները կրկին անգամ առաջակեցին. ուղերձով դիմել Վայոց ձորի մարզպետին `«հրատապ միջոցներից» որոշակի գումար հատկացնել ջրամբարի վերանորոգման համար , որովհետև վթարային վիճակում է խմելու ջրի ջրամբարը և արդեն 27 ամիս է չի գործում: Մազպետ Հ. Սարգսյանը իր

մտահոգությունն արտահայտեց նշված հարցի շուրջ, արտահայտելով այն մտքը, որ համաֆինանսավորման հնարավորության դեքում խնդրին լուծում կտրվի:

Ժողովականները պատրաստակամություն հայտնեցին իրենց աջակցությունը համայնքի ղեկավարին , իրականացնելու համայնքի առջև ծառացած խնդիրները:

Ժողովը համայնքի ղեկավարի հաշվետու ժամանաշրջանը գնահատեց բավարար:

Ժողովի նախագահ՝ Ս. Մարգարյան

քարտուղար՝ Գ. Սաֆարյան